

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵՒՈՑԹՆԵՐ

Ս. Յ. Բասմաշեան. «Բանասեր», Հանդէս հնախօսական, պատմական, լեզուաբանական և քննական, հատոր Առաջին, պրակ Ա. Բ. Գ. Պարիս 1899.
Նորայր Ն. Բիւզանդացի. Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնը, դէռ Մակարայեցւոյ, Եւթաղ Ազեղսանդրացի, Աղաթանգեղոս և Փաւստոս Բիւզանդ. Տփլիս 1900.

Արշակ Մնացականեանց. Հոգին և ուղիւ, Դր. Էդուարդ Ալբերտից թարգմանութիւն. Մոսկուա 1899.

Ռժ. Սիմէօն Շաշ-Նազարեանց. Որոշ կանոնադրութեան և ծրագրի անհրաժեշտութիւնը և Հայոց թեմական հոգևոր դպրանոցների վարչական և ուսումնական կարգ ու կանոնի՝ դիտարկման և փակեղծութեան զաղափարը. Մոսկուա 1900.

Յարութիւն Թումանեանց. Մեղք-Բեղար. Տփլիս 1900

Ջրիտ. Թաղէոսեանցի բանաստեղծութիւնները. Բաղու 1900

Աւագ Ա. Շաշ-Մուրադեան. Հին Հայոց հեթանոսական կրօնը. Բաղու 1900.

Հանդիսիս ընթերցողներին այս նուագ հարուստ գրական երևոյթների մասին զեկուցանելու բախտը չունիմ. ինչպէս օրէցօր նուագում է հայ և հայերէն ընթերցողներու թիւն, այնպէս էլ պակասում են զուտ գրական արտադրութիւնները: Գեղարուեստական գրականութիւնը, որին սնուցանում է ժողովրդի սէրը, հետըզհետէ աղքատանում է, իսկ գիտնական գրականութիւնը, մի զարմանալի հակասութեամբ հարստանում:

Զեմ յիշում ո՞վ է դիտել հայ գրական քննադատներից, թէ այսօր մի կատարեալ շռայլութիւն է մեր մէջ բանասիրութիւնը, մինչդեռ մի հատիկ գրականական ամսագիր չունինք, սրժանի այդ անուան, այսօր ունինք մենք չորս բանասիրական, պատմական և հնա-

խօսական ամսագիր: Մեր անցեալը լուսաբանող և հնու-
թեան նշխարները ժողովող ու մեր հին լեզուն և գրա-
կանութիւնն ուսումնասիրող «Բազմավէպի», «Արարա-
տի» և «Ամսօրեայ Հանդիսի» վրայ անցեալ տարուան
ընթացքում աւելացաւ և «Բանասէրը», որ ամենայն
եռանդով և հմտութեամբ մըցում է իւր աւագագոյն
նիզակակիցների հետ և լրացնում նրանց թերին:

Հնախօսութեան բնեռագիտական բաժինը ցարդ
անծանօթ էր հայ գրադիտութեան իւր այժմեան լա-
ռաջադիմութեամբ, թէպէտև Վանեան առաջին բե-
ւեռագրութիւնները էջմիածնի «Արարատի» մէջ են հրա-
տարակուած, այսօր «Բանասէրը» լրացնում է այդ թե-
րին կատարելապէս: Հայաստանի նախնական պատմու-
թիւնը պարզել է սեպագրութիւնը և մինչ մեր երկրի
պատմական շրջանի առաջին դարերը խորին մթութեան
մէջ են թաղուած, սեպագրութիւնը մի կատարեալ պատ-
կեր է տալիս մեզ Հայաստանի նախահայկեան շրջանի
«Բանասիրի» առաջին պլակներում հրատարակուած են
Դարեհի արձանագրութիւններից մեր երկրին վերաբե-
րող հատուածներն իրենց թարգմանութեամբ, այլ ևս
այն հատուկտորները, որ գերապ. Սմբատեան սրբա-
զանը հրատարակել էր վերջին տարիներս: Թէպէտև ան-
ուրանալի են բնեռագիտութեան արած քայլերն և այդ
գիտութեան խարխափումներից դուրս գալու առաջին
քայլերը, սակայն պիտի խոստովանիմ, որ դա դեռ ևս
շատ հեռի է իրական պատմութիւն լինելուց: Առանձ-
նապէս անհասկանալի է ինձ այն արձանագրութեանց
ընթերցումն, որոնց լեզուն իսկ անյայտ է: Գեղեցիկ
նմուշ է բնեռագրութեան անորոշութեան համար Շահ-
րիար գիւղի արձանագրութիւնը, տես. «Բանասէր» պրակ
Բ. եր. 99.

«Բանասէրը» բացի սեպագրութիւնից զբաղւում է

և մերձաւոր հնախօսութեամբ, տեղ տալով Կ. Պօլսի հայ եկեղեցեաց հնախօսութեան:

Ուշագրութեան արժանի են մեր հին բանասէր հայր Սուքիաս վ. Պարոնեանի կազմած ձեռագրաց ցուցակն, որուն վաղուց ի վեր սպասում են հայ գրականութեամբ զբաղողները: Հայոց ձեռագրների նորագոյն ցուցակներն ամենն ևս կազմուած լինելով Բերլինի հայ ձեռագրաց մեր ցուցակի օրինակով՝ ափսոսում ենք, որ լեռագայ յօրինողները ոչ մի նորութիւն չեն մտցրել ձևի մէջ, որ կարելի է կրճատել և բաւական տեղ ու ժամանակ խնայել:

Իբրև աճող ու զարգացող մի տունի, «Բանասէրն» օր աւուր բարգաւաճում է. Գ. պրակն իւր արտաքինով և ներքինով արդէն իսկ մի որոշ ծրագրով և գեղեցիկ ուսումնական ամսաթերթ է, ուր պատմական, լեզուաբանական և հնախօսական յօդուածներն ընթերցողի ուշքն են գրաւում: Ափսոսում եմ, որ ժամանակի և տեղի սղութիւնը չեն ներում առանձինն և երկարօրէն խօսելու պ. Մէլէի, Աճառեանի և հ. Պարոնեանի յօդուածների վրայ, որոնք ամենքն էլ արժանի են հայ բանասէրների ուշագրութեան: Յաջողութիւն ենք մտղթում պ. Բասմաճեանին, որ շնորհիւ իւր պատրաստութեան և հայ ու օտար գիտնականներից գտած օժանդակութեան կարողանում է հայոց անցեալը պարզել:

Նորայր Բիւզանդացին հայ դասական բանասիրութեան նահապետներից մէկն է, ուստի կարիք չը կայ նորա նոր երկն յանձնարարելու: Բանասիրութիւնը (Philologie) մի դժուարին և համբերութիւն պահանջող գիտութիւն է, ուր տարիների վաստակը երկտողով միայն կարելի է յայտնել: Ինչքան էլ մեծ լինի Մխիթարեանների երախտիքը մեր հին գրականութեան ուսում-

նասիրութեան գործում, մեծ աշխատանք և երկար ժամանակ պէտք է դեռ ևս նրանց գործած սխալներն ու տարածած սխալ կարծիքներն ուղղելու, այս աշխատանքը վաղուց ի վեր լանձն է տուել պ. Նորայրը, որ այս գործի մէջ նոյնն է շարունակում: Հեղինակի վախճանական եզրակացութեանց մասին խօսելը այլ առթիւ թողնելով, հայ գրականութեամբ հետաքրքրուողների ուշադրութեանն ենք լանձնում այս շտեմարանի անթիւ նորութիւններն, որոնք ձեռք են բերուած տարիների աշխատանքով և մեծ հմտութեան շնորհիւ: Գրքիս ամեն մի երես, ամեն մի ծանօթութիւն նորանոր ուղղագրութիւններ, ընթերցանութիւններ և պատմական ու գրականական սրբագրութիւններ են առաջարկում ցարգ յայտնի և տարածուած սխալ ու թիւր կարծիքների վերաբերութեամբ:

Գիտնական գրականութեան փիլիսոփայական ճիւղն ևս երբեմն երբեմն հարստանում է փոքրիկ թարգմանութիւններով, որոնց կարգին ենք դասում և բժիշկ ուսանող Ա. Մնացականեանի թարգմանած «Հոգին և ուղեղը», որ մի լուրջ ժողովրդականացրած դասախօսութիւն է: Բայց առնելով մի քանի օտարաբանութիւններ, թարգմանութիւնս յաջողակ կարելի է կոչել, թէպէտև բնագիրը չունինք առաջներս, որ համեմատենք:

Փիլիսոփայական գրականութիւնից պիտի անցնենք մանկավարժութեան, որի ծաղկման շրջանն անցաւ մեր գրականութեան համար: Երեւանի թեմական դպրոցի նախկին տեսուչ, պ. բժիշկ Ս. Շահ Նազարեանը մի ահագին խնդիրների կարկուտ է թափում մեր դպրոցների վերաբերութեամբ: Եթէ չեմ սխալում պարոնի կարճատև տեսչութեան ամիսների թուին հաւասար են նրա հրատարակած տետրերը. պարզապէս երևում է,

որ նա շատ քիչ է ծառայել Հայոց դպրոցներում և ժամանակ չէ ունեցել բոլոր խնդիրներին ծանոթանալու, սակայն անտեղի չեն նորա յարուցած խնդիրները: Ես կարծում եմ, որ Ներսիսեան դպրոցի վարչուլթիւնը կամ նոյն իսկ ուսուցչական խումբը մեծ ծառայութիւն արած կը լինէին, եթէ գրէին այդ դպրոցի ոչ թէ արտաքին, այլ ներքին պատմութիւնը, այսինքն ծրագրի, վարչութեան և տուած արգասիքի: Եթէ յարգելի բժիշկը ծանօթ լինէր Ներսիսեան դպրոցի գործերին, նա այլ կերպ կը վճռէր խնդիրն ու կը տեսնէր, որ իրենից առաջ Հարիւրաւորներ պարապել են նոյն խնդրի լուծմամբ:

Ի գիտութիւն պ. Շահ-Նազարեանի Հաղորդեմ, որ 1887-ից սկսած, առ նուազն վեց անգամ ծրագիր է մշակուել Ներս. դպրոցում, իսկ մինչև այդ ժամանակ վեց անգամ վեց, Կարդալով պ. Բժշկի տետրերն առ Հասարակ և այս վերջինն յատկապէս, այն եզրակացութեան ենք գալիս, որ յարգելի Հեղինակն իւր տեսչութեան ամեն մի երևույթն անգամ արձանագրել է կամեցել, իսկ առաջադրած խնդիրները թողել է չը լուծուած:

Զուտ գրականութիւնից ևս երկու փոքրիկ երևույթ ունինք արձանագրելու, գրանք են պ. Յարութիւն Թումանեանցի «Մեղիք-Բէգլարն» և Քրիստ. Թադէոսեանի բանաստեղծութիւնները, որոնք զուրկ չեն աւիւնից և արտաքին գեղեցկութիւնից:

Թէպէտ և չարժէ լիշատակութեան իսկ, բայց ես լիշում եմ այստեղ մի ոմն Ս. Լազ Շահ-Մուրադեանի «Հին Հայոց հեթանոսական կրօնը» մեծ տիտղոս կրող հրոստածքը, որովհետև ափսոս է այդ գրքովը գրուածք սնուանելը: Մեր գրական տգէտ առաջնորդներն ամեն մրոտողին առաջ քաշելով՝ այնտեղը հասցրին, որ իւ-

քաքանչիւր աշակերտ, համբալ, տգէտ և անուս իւր անունը տպագրուած տեսնելու տենչով վառուած, առնում այս տեղից և այն տեղից արտագրում կամ աղճատում և լոյս է ընծայում: Ափսոս թուղթ, ափսոս գրաշարի աշխատանք: Անմահ Խորենացին սրապիսեաց մասին է ասել, թէ «աշակերտք հեղգ առ ի յուսումն և փոյթ առ ի վարդապետեր»:

Մի այսպիսի ողորմելի մրոտուածք ևս մի օրիորդի անուն է կրում, խղճուկը բարի կամք է ունեցել, բայց զուրկ է եղել կարողութիւնից: Այդ ազնիւ օրիորդը արտագրել է մեր սովորական երգուող ոտանաւորներն և մի ժողովածու է կազմել, Աստուած գիտէ, թէ քանիցս մեղանչելով անպարտ հեղինակների դէմ. միակ նախադասութիւնը, որ ինքն է կազմել, գտնուում է գրքուկի ճակատին. «Возвращаю» մի մասը Ախալքալակի երկրաշարժից վնասուածներին, օգուտ բառի սկզբնական ձևը չը գիտենալ և մի ամբողջ գէրք հրատարակել. ահա մի գործ, որ կը պսակուէր արժանապէս, եթէ հրատարակուած լինէր հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութեան ձեռքով:

Ն. Գ.

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍՏՈՒԵՐԸ.

Պէնատիոս Լոյօլա. նրա կեանքը եւ հասարակական գործունէութիւնը. (պատկերով) կազմեց Լեւոն Մ.-Առ. Թիֆլիս. տպ. Ռոսինեսանցի. 1899. երես. 121: Դիմն է 30 կ:

Թէ կեանքի և թէ հասարակական գործօնների ուսումնասիրութիւնը պէտք է երկու կողմից յառաջ ընթանայ, որ ժողովուրդը կարողանայ ապահով գաղափար կազմել ճշմարտութեան մասին: Լոկ դրական ուսումնասիրութիւնը բաւարար չէ, քանի որ համեմատութեան միջոց չէ տալիս, գիտակցական չէ